ԱՇԽԱՐՀ

## Ուզբեկստան. Բարեփոխումների «իրավաքանական» փուլը

ՏԱՇՔԵՆԴ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ԲԻԶՆԵՍ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բարեփոխումներին օգնելու TACIS ծրագրի շրջանակներում այստեղ եվրոպական ընկերակցությունների հանձնաժողովի գրասենյակում հայտարարվեց դրա երրորդ փուլն սկսելու մասին:

Առաջին փուլը ներառում էր Ուզբեկստանի բանկային ու ֆինանսական համակարգին հասկացված օգնությունը, որի արդյունքը դարձան դրամահատարանի գործարկումը և ազգային արժույթին անցնելը:

Երկրորդ փուլը նշանավորվեց էներգակենտրոնի ստեղծմամբ:

Երրորդ փուլի առանձնահատկությունը իրավադատության բնագավառի վերափոխումներն են: Եվրամիության փորձագետ դոկտոր Ռոլֆ Կնիդերի խոսքերով, շատ տպավորիչ է Ուզբեկստանի տնտեսական առաջընթացը բարեփոխումների ուղիով: Դա դժվար է, բայց սոցիալական առումով անհրաժեշտ: Այսօր գլխավոր խնդիրը բարեփոխված դատական օրենսդրության և փաստաբանական ծառայության մասին օրենքի կիրառումն է, գտնում է նա:

## Էստոնիա. Գների նոր բարձրացում

ՏԱԼԼԻՆՆ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ԲԻԶՆԵՍ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Էստոնիայի հիմնական էներգետիկ հումքի՝ այրվող թերթաքարի գներն այսօրվանից 1 տոննայի դիմաց կազմում են 67 էստոնական կրոն: Դա նշանակում է հանրապետությունում աղյուսի արժեքի հետագա աճ:

Թերթաքարի գների վերանայումը հանքափորների հետ իշխանությունների երկարատև բանակցությունների հետևանքն է: Հանքափորները պահանջում են աշխատավարձի բարձրացում և սոցիալական պաշտպանության արդյունավետ մեխանիզմների մշակում: Թերթաքարի թանկացման պատճառով օգոստոսին կարող են բարձրանալ մի շարք ապրանքների և սպասարկումների գներ:

## Լեհաստան. Ընդվզման 50-ամյակը

ՎԱՐՇԱՎԱ, 1 ՕԳՈՍՏՈՍ, BBC: Երեկ և այսօր պաշտոնական թե ժողովրդային հանդիսություններով Լեհաստանում նշվում է 1944 թ. Վարշավայում գերմանական բռնագրավման դեմ կատարված ընդվզման 50-ամյակը: Առաջին անգամ այդ հանդիսություններին մասնակցում է նաև Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության նախագահը, ինչը մեծ դժգոհություն է առաջացրել հատկապես այդ ընդվզման մասնակիցների մոտ: Հանդիսություններին մասնակցում է Բորիս Ելցինի ներկայացուցիչը: Հիշեցնենք, որ հիտլերականները առանձին դաժանությամբ էին ճնշել այդ ապստամբությունը սպանելով շուրջ 200 հազար լեհ և գետին հավասարեցրել Վարշավայի բազմաթիվ թաղամասեր:

## Հարավաֆրիկա. Մանդելայի կառավարությունը երկար չի դիմանա

ՊՐԵՏՈՐԻԱ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հարավաֆրիկյան հանրապետության ազգային միասնության կառավարությունը նախագահ Նելսոն Մանդելայի գլխավորությամբ հազիվ թե իշխանության գլուխ մնա լրիվ ժամկետի ընթացքում, որը երկրի ժամանակավոր սահմանադրության համաձայն կազմում է հինգ տարի: Այս կարծիքը հայտնեց ՀԱՀ ներքգործնախարար, զուլուների «Ինկաթա Ֆրիդոմ Պարտի» կուսակցության ղեկավար Մանգոսուտու Բութելեզին:







«Գործնական» հրատարակչության տպարան, Երևան-23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1812. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 1. 08. 1994 Գինը՝ 10 դրամ

digitised by A.R.A.R.@